## ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ, ՌԱԴԻՈՏԵԽՆԻԿԱՅԻ և ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՁ-ՇՀԱՊՁԲ-11/12-14-1»

Ք.Գյումրի

« » « » 2014 թ.

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն , ի դեմս Միջազգային գլխավոր տնօրենի տեղական տեղակալ՝ Վ.Մարտիրոսյանի , որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և « » ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային սարքավորումներ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան եւ ժամկետը սահմանվում է առնվազն 30 աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

2.3 Հաշվի առնելով գնորդի գործունեության առանձնահատկությունները՝ /վթարներ, անհետաձգելի դեպքեր, որոնք հնարավոր չէ կանխավ նախատեսել/ անհրաժեշտ ապրանքի գնումը եւ մատակարարումը իրականացվում է միայն գնորդի ներկայացրած ծավալով, պահանջարկից հետո եռօրյա ժամկետում, տեխնիկական բնութագրին համապատասխան, հանձնման ընդունման արձանագրության հիման վրա և գնորդը որևէ պարտավորություն չի կրում հավելված 1-ի ամբողջ ծավալը չպատվիրելու համար:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է՝ ____________(                                        ) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N1 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է համաձայն N3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է N4 հավելվածով հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա կողմերի համաձայնությամբ վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

**5. Ապրանքի որակը և երաշխիքը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ :

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կարող է գանձվել տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից կարող է գանձվել տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը ,տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար կարող է հաշվարկվել տույժ՝ վճարման ենթակա չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից եւ գործում է մինչեւ 31.12.14թ.:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշվում են և դրանց փոփոխությունը գնահատվում է հետևյալ կերպ. փոխադարձ քննարկումների արդյունքում:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է --**5**-- էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3,4 հավելվածները՝ բաղկացած ---5-- թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

**10.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ | **«                    »** |
| Ք.Գյումրի Դուռկն 1 | _______________ |
| <<Առէքսիմբանկ>> Գազպրոմբանկի խումբ | _____________________ |
| Հ/Հ2380020526250100 | _________________ |
| ՀՎՀՀ 05531223 | **Տնօրեն՝** |
| Միջազգային գլխավոր տնօրենի ՏՏ՝ | **(ստորագրություն)** |
| _________________Վ.Մարտիրոսյան | **Կ.Տ** |
| ստորագրություն | |
| Կ.Տ | |

«ՀՀՏԿՆԶՏՊԿ-ՇԶ-ՇՀԱՊՁԲ-11/12-14-1» ծածկագրով
մրցույթի հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

ԴԻՄՈՒՄ

_______________________________________-ն հայտնում է , որ ցանկություն ունի Ընթացակարգի մասնակցի
անվանումը/անունը/
մասնակցելու « Շիրակ-ջրմուղկոյուղի » ՓԲԸ-ի կողմից «ՀՀՏԿՆԶՏՊԿ-ՇԶ-ՇՀԱՊՁԲ-11/12-14-1» ծածկագրով հայտարարված ընթացակարգի գնի առաջարկի չափաբաժիններին և հայտի /ծանուցման/ պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_______________________________________ -ն հայտնում է և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը/անունը/

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է , բացառությամբ՝

1. Պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների :
2. Համատեղ գործունեության կարգով /կոնսորցիումով/ մասնակցության

դեպքերի:

_______________________________________ - ն հայտնում և հավաստում է , որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը

գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

______________________________ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է-- - ----------------
Ընթացակարգի մասնակցի անվանումը

_____________________________________________________ _______________
Մասնակցի անվանումը /անունը/ղեկավարի պաշտոնը,Անուն Ազգանուն/ /ստորագրություն/

«______»_______________2014թ
(ամսաթիվը, ամիսը)

**«ՀՀՏԿՆԶՏՊԿ-ՇԶ-ՇՀԱՊՁԲ-11/12-14-1» ծածկագրով**
**մրցույթի հանձնաժողովին**

**Գնի առաջարկ**

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ՀՀՏԿՆԶՏՊԿ-ՇԶ-ՇՀԱՊՁԲ-11/12-14-1» ծածկագրով պարբերական մրցույթի հրավերը ______________________________________________________-ն
մրցույթի մասնակցի անվանումը(անունը)
առաջարկում է ______________________________չափաբաժին(ներ) կատարել հետևյալ գներով.

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | | | | |
| 2 | | | | |
| 3 | | | | |
| 4 | | | | |
| 5 | | | | |
| 6 | | | | |
| 7 | | | | |
| 8 | | | | |
| 9 | | | | |

***3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:***
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

------------------------------------------------------------------------------- ____________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը) (ստորագրություն)

Կ.Տ.

«______»_______________2014թ
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 1
«------» ----2014 թ. կնքված
N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՋ-ՇՀԱՊՁԲ-11/12-14-1» պայմանագրի

**Շիրակ-ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ին 2014թ. անհրաժեշտ էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ցանկ**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| N | Չափաբաժին | Չ/մ | Քանակ | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|---|
| 1 | Էլ. հաշվիչ | հատ | 2 | Էլեկտրոնային հաշվիչ՝ միաֆազ և եռաֆազ, Ռեակտիվ էներգիայի , էլեկտրական մեծությունների արժեքները, մեխանիկական պահանջները, կլիմայական պայմանները՝ ըստ ԳՕՍՏ Ռ 52320,CA 4y |
| 2 | Էլ. շարժիչ ջրի պոմպի 7.5 կՎտ, 2800 պտ. | հատ | 2 | Ջրի պոմպի Էլ. Շարժիչ, 7.5 կՎտ, 2800 պտ. |
| 3 | Էլ. շարժիչ ջրի պոմպի 4.5 կՎտ, 2800 պտ. | հատ | 5 | Ջրի պոմպի, էլ. շարժիչ , 4.5 կՎտ, 2800 պտ. |
| 4 | Էլ. թողարկիչ | հատ | 20 | Տիպը՝ ПМА 2, ПМА 3, ПМЛ 2,ПМЛ 3, ПМЕ 4 |
| 5 | Էլ. լարման կարգավորիչ | հատ | 2 | Տիպը՝ Xj 5, Xj 6, Xj11 |
| 6 | Կոնդեսատոր 10-30 | հատ | 10 | էլեկտրոկուտակիչներ 10-30 МКФ, նախատեսված էլեկտրական ցեխահան պոմպերի համար |
| 7 | Էլեկտրաաղոց | հատ | 5 | Կտրող գործիք GWS 22-180 LVI /2 հատ/,Կտրող գործիք GWS 8-125 /3հատ/ |
| 8 | Էլեկտրադրել | հատ | 2 | Դրել հարվածային GSB 13 RE |
| 9 | Ջերմազոդման սարք | հատ | 4 | Ջերմազոդման սարք |
| 10 | Գազազոդման սարք | հատ | 5 | Գազազոդման սարք |
| 11 | Բալոնի ռեդուկտոր | հատ | 10 | ռեդուկտոր թթվածնի բալոնի, ԳՕՍՏ 13861-89 |
| 12 | Հեղուկ գազի ռեդուկտոր | հատ | 5 | ռեդուկտոր բալոնի, ԳՕՍՏ 13861-89 |
| 13 | Բակային հորիզոնական պոմպ 3-Կ-6 | հատ | 3 | Բակային հորիզոնական պոմպ 3-Կ-6 |
| 14 | Հորիզոնական պոմպ 2-Կ-6 | հատ | 5 | Հորիզոնական պոմպ 2-Կ-6 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 15 | Հորիզոնական պոմպ 3-Կ-9 | հատ | 3 | Հորիզոնական պոմպ 3-Կ-9 |
| 16 | Ջրմուղագործական բանալիներ | հատ | 10 | ջրմուղագործի կարգավորող բանալի լայն քայլով՝ 200մմ, Բանալի խողովակի N1, N 2, N 3 |
| 17 | Բանալիներ կոմպլեկտ | հատ | 10 | ,Մանեկադարձիչ բանալի "նակիդնոյ"8-27, կլուչ ռազվադնոյ 6-8" |
| 18 | Մանոմետր մինչև 10մթն. | հատ | 5 | Մեխանիկական մանոմետր մինչև 10մթն. |
| 19 | Մանոմետր մինչև 40մթն. | հատ | 2 | Մեխանիկական մանոմետր մինչև 40մթն. |
| 20 | Պոլիէթիլ.խողովակների էլեկտրոմուֆտի զոդման ապարատ | հատ | 1 | Ունիվերսալ եռակցման մեքենա /HURNER HST 300 Print կամ համարժեք/ + 2.0 GPS կարողությամբ (1800 արձանագրություններ), եռակցման կցամասերը /ֆիտինգ/ մինչեւ Մ 1200 մմ PE, PP եւ PVDF. Անվտանգ, բարձր տեխնոլոգիաների Եռակցման սարքավորում |

ԳՆՈՐԴ

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ

Ք.Գյումրի Դուդկո 1

<<Առէքսիմբանկ>> Գազպրոմբանկի խումբ

Հ/Հ2380020526250100

ՀՎՀՀ 05531223

Միջազգային գլխավոր տնօրենի ՏՏ՝

_________________Վ.Մարտիրոսյան

ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

« »

_______________

______________________

_________________

Տնօրեն՝

(ստորագրություն)

Կ.Տ

Հավլեված 2

«------» ----- 2014թ. կնքված

N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՁ-ՇՀԱՊՁԲ-11/12-14-1» պայմանագրի

հավելված

# ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԱԿՅԻ, ՌԱԴԻՈՏԵԽՆԻԿԱՅԻ և ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/ն | Անվանում | Քանակ | Հ/մ | Գումար | I եռ-կ | II եռ-կ | III եռ-կ | IV եռ-կ | Ընդ-ը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Էլ. հաշվիչ | 2 | հատ | | 1 | 1 | | | 2 |
| 2 | Էլ. շարժիչ ջրի պոմպի 7.5 կՎտ, 2800 պտ. | 2 | հատ | | 1 | 1 | | | 2 |
| 3 | Էլ. շարժիչ ջրի պոմպի 4.5 կՎտ, 2800 պտ. | 5 | հատ | | 1 | 2 | 1 | 1 | 5 |
| 4 | Էլ. թողարկիչ | 20 | հատ | | 5 | 5 | 5 | 5 | 20 |
| 5 | Էլ. լարման կարգավորիչ | 2 | հատ | | 1 | 1 | | | 2 |
| 6 | Կոնդեսատոր 10-30 | 10 | հատ | | 2 | 3 | 2 | 3 | 10 |
| 7 | Էլեկտրասղոց | 5 | հատ | | 1 | 2 | 1 | 1 | 5 |
| 8 | Էլեկտրադրել | 2 | հատ | | 1 | 1 | | | 2 |
| 9 | Ջերմազոդման սարք | 4 | հատ | | 1 | 1 | 1 | 1 | 4 |
| 10 | Գազազոդման սարք | 5 | հատ | | 1 | 2 | 1 | 1 | 5 |
| 11 | Բալոնի ռեդուկտոր | 10 | հատ | | 2 | 3 | 2 | 3 | 10 |
| 12 | Հեղուկ գազի ռեդուկտոր | 5 | հատ | | 1 | 2 | 1 | 1 | 5 |
| 13 | Բակային հորիզոնական պոմպ 3-Կ-6 | 3 | հատ | | 1 | 1 | 1 | | 3 |
| 14 | Հորիզոնական պոմպ 2-Կ-6 | 5 | հատ | | 1 | 2 | 1 | 1 | 5 |
| 15 | Հորիզոնական պոմպ 3-Կ-9 | 3 | հատ | | 1 | 1 | 1 | | 3 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | Ջրմուղագործական բանալիներ | 10 | հատ | | 2 | 3 | 2 | 3 | 10 |
| 17 | Բանալիներ կոմպլեկտ | 10 | հատ | | 2 | 3 | 2 | 3 | 10 |
| 18 | Մանոմետր մինչև 10մթն. | 5 | հատ | | 1 | 2 | 1 | 1 | 5 |
| 19 | Մանոմետր մինչև 40մթն. | 2 | հատ | | 1 | 1 | | | 2 |
| 20 | Պոլիէթիլ.խողովակ-ների էլեկտրոմուֆտի զոդման ապարատ | 1 | հատ | | 1 | | | | 1 |

**ԳՆՈՐԴ**

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ

Ք.Գյումրի Դուդկո 1

<<Առէքսիմբանկ>> Գազպրոմբանկի խումբ

Հ/Հ2380020526250100

ՀՎՀՀ 05531223

Միջազգային գլխավոր տնօրենի ՏՏ՝

__________________Վ.Մարտիրոսյան

ստորագրություն

**ՎԱՃԱՌՈՂ**

« »

________________

______________________

__________________

Տնօրեն՝

(ստորագրություն)

Կ.Տ

Հավլեված 3
«------» ----2014 թ. կնքված
N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՁ-ՇՀԱՊՁԲ-11/12-14-1» պայմանագրի
հավելված

# ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԱԿՅԻ, ՌԱԴԻՈՏԵԽՆԻԿԱՅԻ և ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/մ | Անվանում | Քանակ | Գին | Գումար | I եռ-կ | II եռ-կ | III եռ-կ | IV եռ-կ | Ընդ-ը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային սարքավորումներ | | | | 25% | 50% | 75% | 100% | 100% |

**ԳՆՈՐԴ**

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ
Ք.Գյումրի Դուդկո 1
<<Առէքսիմբանկ>> Գազպրոմբանկի խումբ
Հ/Հ2380020526250100
ՀՎՀՀ 05531223
Միջազգային գլխավոր տնօրենի ՏՏ՝
_________________Վ.Մարտիրոսյան
ստորագրություն

**ՎԱՃԱՌՈՂ**

« »
________________
______________________
__________________
Տնօրեն՝
(ստորագրություն)
Կ.Տ

Հավլեված 4
«----» ----2014թ. կնքված
N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՋ-ՇՀԱՊՁԲ-11/12-14-1» պայմանագրի
հավելված

Կատարող

Գտնվելու վայր

hh__

ՀՎՀՀ

Պատվիրատու
«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ
Ք.Գյումրի Դուդկո 1
<<Առէքսիմբանկ>> Գազպրոմբանկի խումբ
Հ/Հ2380020526250100
ՀՎՀՀ 05531223

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«------» --------------------- 2-----թ.

Պայմանագրի անվանումը՝ էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային սարքավորումներ ձեռք բերման:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «----» ---------------------- 2014 թ

Պայմանագրի համարը՝ **«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՋ-ՇՀԱՊՁԲ-11/12-14-1»**

Պատվիրատուն, ի դեմս Միջազգային գլխավոր տնօրենի տեղական տեղակալ՝ Վ.Մարտիրոսյանի և Կատարողը՝ ի դեմս --------------------------------------------------------, հիմք ընդունելով որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները, աշխատանքները եւ ծառայությունները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի) շրջանակներում Կատարողը «------» --------------------- 2-----թ.-ից «------» --------------------- 2-----թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

ԳՆՈՐԴ

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ
Ք.Գյումրի Դուդկո 1
<<Առէքսիմբանկ>> Գազպրոմբանկի խումբ
Հ/Հ2380020526250100
ՀՎՀՀ 05531223
Միջազգային գլխավոր տնօրենի ՏՏ՝
__________________Վ.Մարտիրոսյան
ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

« »

________________

______________________

__________________

Տնօրեն՝

(ստորագրություն)

Կ.Տ

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՁ-ՇՀԱՊՁԲ-11/12-14-1»

ք. Գյումրի << >> _____________ 20 թ.

<<Մասնակցի անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Շիրակ ջրմուղ կոյուղի >> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ << >> ձեռքբերման «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՁ-ՇՀԱՊՁԲ-11/12-14-1» ծածկագրով շրջանակային ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված << >> ձեռքբերման N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՁ-ՇՀԱՊՁԲ-11/12-14-1» գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ---------------------թվերով-------------------- (------------------------------տառերով-----------------------------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանումը>> -ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Շիրակ ջրմուղ-կոյուղի >> ՓԲԸ-ն առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20 թ. -ի -ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները.

<<Մասնակցի անվանումը>>
<<Մասնակցի հասցեն>>
<<Մասնակցի բանկի անվանումը>>
Հ/Հ
ՀՎՀՀ
տնօրեն՝ --------------------------------
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ -----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ